
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՁ (XVIII Դ. - XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ԱՍՈՅԱՆ Թ. Ա.

Մխիթարյան միաբանությունը նշանակալի հետք է թողել հայ մշակույթի պատմության մեջ՝ հոգալով հայ ժողովրդի «հոգևոր, բարոյական և մտավոր կարիքները», ինչպես ձևակերպել են իրենք Մխիթարյանները: Հայ հասարակական միտքն էլ անտարբեր չի եղել և միշտ գնահատել է միաբանության գործունեությունը թե՛ իբրև զուտ հայկական երևույթ, թե՛ իբրև եվրոպական մշակույթի բաղադրիչ, թեև տրված գնահատականները բավական հակասական են՝:

Մխիթարյանների գործունեությունը հիմնականում արժևորվել է գրաբարի նկատմամբ դրսևորած վերաբերմունքի տեսակետից, այնինչ նրանք նույն հոգածությամբ զբաղվել են նաև աշխարհաբարի հարցերով: Փաստերը ցույց են տալիս, որ Մխիթարյանների ուշադրությունից չի վրիպել արևմտահայերենը՝ իբրև հայերենի նոր լեզվատրակ, և ամեն կերպ աշխատել են կանոնավորել ու զարգացնել այն: Մ. Սեբաստացուց սկսած՝ գրեթե բոլոր Մխիթարյաններն էլ հասկացել, գնահատել են աշխարհաբարի դերն ու նշանակությունը թե՛ հաղորդակցման, թե՛ գիտության ու մշակույթի զարգացման, թե՛ ընդհանրապես մարդկանց գրքի հետ կապելու առումով:

Աշխարհաբարի մասին Մխիթարյանների դիտողությունները, մի կողմից, ներկայացնում են լեզվական իրավիճակը, մյուս կողմից՝ նրանց վերաբերմունքն այդ լեզվատրակի նկատմամբ, իսկ նրանց աշխարհաբար գրքերի լեզուն ոչ միայն արտացոլում է իրական լեզվավիճակը, այլև ժամանակագրորեն ցուցադրում արևմտահայերենի զարգացման ընթացքը:

XVIII դ. սկզբին ձևավորվող արևմտահայերենն ու արևելահայերենը սկսում են զարգանալ՝ ցուցաբերելով հնչյունական, բառապաշարային, քերականական զգալի տարբերություններ, որոնք գնալով ավելի էին խորանում: Օրակարգի հարցեր էին դառնում արևմտահայերենի կանոնարկումն ու մշակումը: Հենց այն հանգամանքը, որ արևմտահայերենի առաջին քերականությունը, թեկուզև հայատառ թուրքերենով, կազմել և հրատարակել է Մ. Սեբաստացին, արդեն խոսում է ոչ միայն որոշակի վերաբերմունքի, այլև լեզվական քաղաքականության մասին, որին հետևեցին նաև նրա աշակերտները:

1 Այդ մասին մանրամասն տե՛ս Նալբանդյան Մ., Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1980, Լեռ, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1980, Մարգարյան Ալ., Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, Ե., 1957:

Արևմտահայերենի բառապաշարի, քերականական համակարգի առաջին նկարագրությունը տրված է Մ. Սեբաստացու կազմած՝ «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» դասագրքում²: Այն ուսուցողական-գործնական նպատակ հետապնդող գրքույկ է, որը գրված է հայատառ թուրքերենով (օրինակները բերված են հայերենով) և տարրական գիտելիքներ է պարունակում այդ շրջանի արևմտահայերենի վերաբերյալ: Մրա հայերեն, ավելի ընդարձակ տարբերակը մնացել է անտիպ: Հետաքրքիրն այն է, որ չնայած տարածված մտայնությանը, թե աշխարհաբար գրելը սոցիալության և գոեհկության նշան է, մի մտայնություն, որ կաշկանդում էր նույնիսկ հարյուր տարի հետո ասպարեզ իջած Խ. Աբովյանին, Սեբաստացին դրսևորել է համարձակ շրջահայացություն՝ հավասարության նշան դնելով գրաբարի և աշխարհաբարի միջև: Օրինակների բաժնում նա ասում է. «Թէ այս լեզուովս խօսիք, թէ այն լեզուովն, ամէնքն թող ի փառս Աստուծոյ լինին, և այն է ամէնէն լաւն»³: Օրինակներից երևում է նաև, որ Սեբաստացին պարզապէս ժամանակ չի ունեցել, այլապէս ավելի շուտ կգրեր այս ձեռնարկը, որովհետև այն դարձել էր հասարակական պահանջ: Նույն՝ 1727 թ. հրատարակված նրա գրքի⁴ առաջաբանից ակներև է դառնում ոչ միայն աշխարհաբարի կարևորության գիտակցումը, այլև նրա նկատմամբ զգույշ վարվելու ձգտումն ու պահանջը: Փաստորեն, Մ. Սեբաստացին առաջինն է, որ առաջ է քաշում նաև այն մշակելու գաղափարը:

Ուսումնասիրելով Մ. Սեբաստացու աշխարհաբար հեղինակությունների լեզվական նյութը՝ նկատում ենք հետևյալ իրողությունը. «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» գրքույկում Սեբաստացին ոչ հանգամանորեն, բայց գործնականում բավարար մակարդակով ներկայացրել է արևմտահայերենի քերականական առանձնահատկությունները, սակայն իրականում աշխարհաբար գրքերի լեզուն ավելի բազմաբնույթ է ու բազմաշերտ: Սեբաստացին ինքն էլ հաճախ շեղվում է իր նշած օրինաչափություններից, նկատելի է հակումը դեպի գրաբար: Այսպէս, եթե «Քերականութեան» բառամթերքը հիմնականում աշխարհաբարյան է, և դա գործածելիս Սեբաստացին արտացոլում է արտասանական, հնչյունափոխական իրողությունները, ապա «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» մեջ նա մեծ մասամբ հետևել է գրաբարին: Գոյականի և դերանվան համակարգերում խիստ նկատելի է հոլովների գրաբար և աշխարհաբար տարբերակների համաժամանակյա կիրառությունը: Արևմտահայերենին բնորոշ օրինաչափություններն ավելի լավ են

² Սեբաստացի Մ., Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց, Վենետիկ, 1727: Երևանի գրադարաններում կա 1771 թ. վերահրատարակությունը:

³ Նույն տեղում, էջ 21:

⁴ Սեբաստացի Մ., Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, Վենետիկ, 1727:

արտացոլվել բայի համակարգում, չնայած այստեղ էլ գրաբարյան տարբերակները քիչ չեն:

Աշխարհաբարին առնչվող հարցերին Սեբաստացին անդրադառնում է նաև իր կազմած «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի առաջաբանում: Նա նշում է, որ բառարանի ստեղծումը պայմանավորված էր մի տեսակ հասարակական պատվերի առկայությամբ: Այնուամենայնիվ, Սեբաստացին հասկանում էր, որ նման բառարանը կարող էր օգտակար լինել միայն «գրոց լեզուն» իմացողներին կամ սովորել ցանկացողներին: Դրա համար էլ նաև կազմում է գրաբար-աշխարհաբար և աշխարհաբար-գրաբար բառացանկեր, որոնց քննությունը ցույց է տալիս, որ իբրև գլխաբառ դնելով աշխարհաբարյան արտասանական տարբերակները՝ Սեբաստացին հղում է կատարում տրված բառերի գրաբարյան ձևերին (օր.՝ անձրև տե՛ս անձրև): Այնուամենայնիվ, դա կարելի է բացատրել ոչ թե գրաբարամոլությամբ, այլ աշխարհաբարը գրաբարի օգնությամբ մշակելու, կանոնավորելու ձգտումով: Եթե ընդհանրացնենք արևմտահայերենի բառապաշարային, քերականական առանձնահատկություններն ըստ Սեբաստացու աշխարհաբար գրքերի, ապա կարելի է ասել հետևյալը.

1. Բառապաշարում գերիշխում է գրաբարյան բառաշերտը, իսկ թուրք-պարսկական փոխառություններ գրեթե չկան: Թուրքերեն փոխառություններ՝ իբրև հայերեն բառերի հոմանիշ-բացատրություններ, շատ են գործածված «Հայկազեան բառարանում», բայց դա էլ՝ որոշակի նպատակադրմամբ:

2. Մ. Սեբաստացին մեծ մասամբ պահպանել է բառերի գրաբարյան գրությունը, իսկ այն դեպքերում, երբ արտացոլում է բառերի հնչական վիճակը, ապա հղում է կատարում գրաբարին կամ գործածում է նաև զուգահեռ ձևերը:

3. Քանի որ Մ. Սեբաստացին մեծ մասամբ պահպանում է գրաբարյան ուղղագրությունը, դրա հետևանքով արևմտահայերենին բնորոշ հնչյունափոխական երևույթներն ամբողջովին չեն արտահայտվել, չնայած դրանք պարզորոշ ուրվագծված են:

4. Ազատորեն օգտագործում է և՛ աշխարհաբարյան, և՛ գրաբարյան հոլովաձևերը:

5. Բայի համակարգը հիմնականում աշխարհաբարյան է:

6. Լեզվի՝ դեպի գրաբար հակումը նկատելի է նաև գ, առ, ի նախդիրների անսահմանափակ գործածությամբ, միաժամանակ շատ են միայն արևմտահայերենին բնորոշ ալ, նե, մի(մը) մասնիկների կիրառությունները:

XVIII դ. վերջին լույս են տեսնում Խ. Սյուրմելյանի «Համառօտ թուարանութին» (Վենետիկ, 1788) և Ղ. Ինճիճյանի «Տեսութիւն հին և նոր աշխարհագրութեան» (Վենետիկ, 1791) ձեռնարկները, որոնք գրված էին արդեն գրաբարից բեռնաթափված,

պարզ և որոշակիորեն ձևավորված արևմտահայերենով: Եթե Մ. Սեբաստացին հակված էր դեպի գրաբարը, ապա նրա աշակերտները դարավերջին խախտում են գրաբար-աշխարհաբար փոխհարաբերությունը՝ հոգուտ աշխարհաբարի: Դա պայմանավորված էր ժամանակի պահանջով. ուզում էին՝ որքան հնարավոր է, գրավոր խոսքը մատչելի դարձնել ժողովրդին: Սյուրմեյանը փաստում է, որ գրաբարը վաղուց անհասկանալի է դարձել, ընդունում է մարդկանց՝ աշխարհաբարով գրված ձեռնարկ ունենալու ձգտումը: Եվ նա՝ իբրև իրատես գործիչ, անմիջապես արձագանքում է հասարակական պահանջին:

Խ. Սյուրմեյանը նաև նշում է աշխարհաբարի բազմակերպ լինելը, որը դժվարացնում էր նման ձեռնարկներ ստեղծելու գործընթացը: «Եւ թէպէտ դժուար էր աշխարհաբար լեզուաւ այսպիսի նիւթոց վրա խօսիլ, մանաւանդ որ մեր ազգին ալ շատ ու զանազան աշխարհաբար կայ խօսելոյ, և գրեթէ ամմէն քաղաք կամ ամմէն գաւառ մէկ զմէկէ տարբեր կխօսին»⁵, - գրում է Խ. Սյուրմեյանը: Նա, ինչպես նաև ուրիշները, աշխատում էր գործածել այնպիսի լեզվաորակ, որը շատերին հասկանալի լինէր: Խ. Սյուրմեյանն ասում է, որ ինքը ջանացել է գրել «միջակ կերպով, որ բազումք խօլայ կարենան հասկընալ»⁶, միաժամանակ ավելացնում «տեղիս տեղիս տաճկի բռեր բանեցնելու»⁷ մասին: Մասնակի տարբերություններով հանդերձ՝ նույն կերպ է մտածում և գործում նաև Ղ. Ինճիճյանը, թեև հայերենի դրսևորումների վերաբերյալ նա դատողություններ չի անում: Նրա «Տեսութիւն հին և նոր աշխարհագրութեան» ձեռնարկում հանդես է գալիս արևմտահայերենը՝ գրաբարյան լեզվատարրերի սահմանափակ կիրառությամբ:

Դարավերջի լեզվական իրողությունների համեմատությունները XVIII դ. առաջին կեսի նմանատիպ երևույթների հետ ցույց են տալիս հետևյալ տարբերությունները.

1. Եթե Մ. Սեբաստացու գործածած բառամթերքը մեծ մասով գրաբարյան է, քիչ է բարբառային տարրը, իսկ օտարաբանություններ գրեթէ չկան, ապա դարավերջին գրականություն են մուտք գործում բազմաթիվ բարբառային բառեր և հատկապես թուրքերեն անհարկի փոխառություններ:

2. Մ. Սեբաստացին հնչյունափոխված շատ ձևեր չի գործածում, մինչդեռ Խ. Սյուրմեյանի և Ղ. Ինճիճյանի ձեռնարկներում արտահայտված է հնչյունափոխությունների այն բազմազանությունը, որ հատուկ էր նոր ձևավորվող արևմտահայերենին:

3. Մ. Սեբաստացին ուղղագրությամբ մեծ մասամբ հետևում է գրաբարին, ուստի բաղաձայնական համակարգում տեղի ունեցած տեղաշարժերը նրա «Գիրք

⁵ Միւրմէլեան Խ., Համառօտ թուարանութիւն աշխարհաբար, Վենետիկ, 1788, էջ 3:

⁶ Նույն տեղում, էջ 3:

⁷ Նույն տեղում:

քրիստոնէականի» լեզվում արտահայտված չեն, իսկ Խ. Սյուրմէյանն ու Ղ. Բնճիճյանը որոշ չափով արտացոլել են նաև իրենց ժամանակի արտասանությունը:

4. Խ. Սյուրմէյանի և Ղ. Բնճիճյանի ձեռնարկներում տիրապետողը աշխարհաբարյան հոլովական ձևերն են: Լեզվի աշխարհաբարացման միտումը զգալի է հասկապես դերանունների գործածության մեջ:

5. Դարավերջին կայունանում են արևմտահայերենին բնորոշ մի (մը կամ մըն՝ ձևով), կու (կ կամ կը՝ ձևով), նէ, ալ մասնիկների, ըլլալ բառի (Սեբաստացու մոտ՝ լինիլ) գործածությունները: Խ. Սյուրմէյանը և Ղ. Բնճիճյանը, ի տարբերություն Մ. Սեբաստացու, դիմում են աշխարհաբարին և մյուս Մխիթարյանների հետ աշխատում են կազմավորել, տեսքի բերել այն: Միանգամայն որոշակիորեն կարելի է ասել, որ XVIII դ. 80-90-ական թթ. Մխիթարյանների աշխատություններում ձևավորվել էր լեզվական նոր որակ, որը տարբերվում էր 30-60-ական թթ. արևմտահայերենից:

Արևմտահայերենի կազմավորման գործընթացը շարունակվում է նաև XIX դ. սկզբին: Աշխարհաբար գրքեր են հրատարակում Հովհ. Չոհրապյանը, Ե. Թովմաճանյանը, Հ. Օղուլլուխյանը, Բ. Փափագյանը, Մ. Ավգերյանը, Ղ. Բնճիճյանը, Մ. Բժշկյանը, Մ. Աղաչրադյանը, Ա. Ճարյանը և այլ Մխիթարյաններ:

Հովհ. Չոհրապյանը մտադրություն է ունեցել «Աստուածաշունչ գրոց» պատմությունը ներկայացնել գրաբար, սակայն, ինչպես երևում է «Ծանուցումն»-ից, ինքն էլ հասկացել է, որ «գրաբարը հասկերցողը քիչ է», ուստի ասում է՝ «դարձուցինք համառօտ կերպով աշխարհաբար ոճով ըրինք»⁸: Նա հասկանում է, որ գրաբարով գրված ու գրվող գրքերը ժողովրդին զրկում են շատ բան իմանալու հնարավորությունից: Դրա համար էլ կրոնական բնույթի գրությունները անուղղակիորեն վերաշարադրվում էին աշխարհաբարով:

Զգացվում է հեղինակի մտահոգությունը հայերենի վիճակի վերաբերյալ: Այնքան մեծ է եղել տաճկերենի, պարսկերենի, «ֆռեն-կերենի» ազդեցությունը, «որ ասով շատ արեր է աշխարհաբար լեզունիս ու անանկ փոխուեր է, որ մէկ տեղացին մէկալին ըսածը դժուար կրհասկընա»⁹: Նա հրաժարվում է օտար բառերի գործածությունից, ընտրում է «ըստամպօլցիի հայերենի ոճը», որը շատերին էր հասկանալի: Այնուամենայնիվ, աշխարհաբարի բառապաշարը աղքատ էր, և այդ բացը լրացվում էր հատկապես թուրքերենի միջոցով: Հովհ. Չոհրապյանը կողմնորոշվում է դեպի գրաբարը, չնայած հաճախ ստիպված էր գրաբար բառերը տաճկերենով բացատրել: Այսպիսով, «Պատմութիւն Աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց» գրքի

⁸ Չոհրապէան Յովհ., Պատմութիւն Աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1803, էջ 3:

⁹ Նույն տեղում, էջ 4:

լեզվի քննությունը ցույց է տալիս, որ դրա հեղինակը հասել է իր՝ «գուտ հայերէն» գիրք գրելու նպատակին: Նրա լեզուն մաքուր է, սակայն ակնառու է, որ Մ. Սեբաստացուց սկսած՝ հայերենը տաճկերենի միջոցով բացատրելու երևույթը հետագայում խորանում է, դառնում սովորական, իսկ ոմանց մոտ՝ խիստ արտահայտված: Չոհրապյանին հետևում է Ե. Թովմաճանյանը, թեև նա լեզվի մաքրության և կանոնավորության հարցերում Չոհրապյանի նման նախանձախնդիր չէր:

XIX դ. սկզբին Մխիթարյանների ուսումնասիրություններում նկատվում է մի միտում. նրանցից ոմանք աշխատում են, որ շարադրանքը լինի միայն հայեցի, մյուսները հաճախ են դիմում թուրքերենին: Բանն այն է, ինչպես փաստում են ժամանակակիցները, արևմտահայությունը թուրքերենին ավելի լավ էր տիրապետում, քան հայերենին: Հ. Օղուլլուխյանը, Մ. Ավգերյանը հակված են թուրքերեն բառամթերքի գործածությանը, Բ. Փափագյանը և Մ. Բժշկյանը ջանում են հայերենը ներկայացնել առանց անհարկի փոխառությունների: Օղուլլուխյանն իր դիրքորոշումն արդարացնում է՝ ասելով. «...քանզի բարուք գիտեմ որպէս մեծ մասը հասկնալու չէ հայկական ոճերը, եթէ չըլլան նմանները տաճկաբար»¹⁰: Այս առումով ինքնատիպ երևույթ է Մ. Ավգերյանի արևմտահայերենը: Մյուսների նման Մ. Ավգերյանն էլ բարձր է գնահատում գրաբարը, ընդունում է նրա կանոնավոր ու «վարպետ» լեզու, «բուն նախնեաց ավանդութիւն» լինելը, բայց այդուհանդերձ, կարևորը ժողովրդին «բան հասկըցնելն» է: Այս տեսակետից նա ընդունում է գրաբարի անօգտակարությունը: Փաստորեն, Մ. Ավգերյանը Մխիթարյաններից առաջինն է, որ հանդես է գալիս աշխարհաբարի ուղղակի պաշտպանությամբ՝ նշելով, որ այն ևս կարող է «գրով ծաղկել»¹¹:

Մ. Ավգերյանի հեղինակած երեք աշխարհաբար գրքերում թուրքերեն բառերի ու արտահայտությունների գործածության մեջ սահմանափակումներ չկան: Եթե նրա նախորդներն ու ժամանակակիցները տաճկերենն օգտագործում էին հայերեն բառերն ու արտահայտությունները բացատրելու նպատակով, ապա Մ. Ավգերյանը դրանք գործածել է բուն շարադրանքում այնպես, որ շատ հատվածներ կարծես գրված են տաճկերենով՝ հատուկենտ հայերեն բառերի օգտագործմամբ:

Ի տարբերություն Մ. Ավգերյանի՝ Բ. Փափագյանը և Մ. Բժշկյանն աշխատում են, որքան հնարավոր է, հայերենը ներկայացնել առանց օտար լեզվատարրերի: Այսպես, Բ. Փափագյանը գրում է. «Նայեցանք, որ հայերէնին մէջը տաճկերէն բառ չըխառնենք և ոչ տաճկերէնին մէջը հայու բառ, որպէսզի երկու լեզուին յատկութիւնն ալ

¹⁰ Օղուլլուխեան Յով., Նիւթ Բժշկական, Վենետիկ, 1806, էջ 5:

¹¹ Ավգերեան Մ., Դեղ կենաց, Վենետիկ, 1810, էջ 311:

պահուի»¹²: Մ. Բժշկյանն էլ գրեթե լիովին հրաժարվել է օտարաբանությունների գործածությունից: Շատ ուսանելի է և արդիական հնչեղություն ունի հետևյալ դիտարկումը. «...խիստ մեծ ամօթ է, որ իր լեզուն կրճգե և ուրիշներուն կըստրվի և իր ազգը մէկ դի կըթողու, ուրիշ ազգաց պատմութեանը տեղեակ կըլլայ»¹³:

XIX դ. 20-30-ական թթ. հանդես եկած Մխիթարյանների լեզվական մշակույթը, ըստ էության, ոչնչով չի տարբերվում նախորդներից: Գ. Ավետիքյանի, Ղ. Բնճիճյանի աշխարհաբար գրքերի լեզուն նույնպես աչքի է ընկնում լեզվական բազմազանությամբ, սակայն նկատելի է հակումը դեպի գրաբար: Նրանք չեն էլ թաքցնում, որ աշխարհաբարի միջոցով փորձում են սովորեցնել գրաբարը: Բայց պետք է ասել, որ այս «գրաբարամոլությունը» ինքնանպատակ չէր. աշխարհաբարով հնարավոր չէր «բարակ միտք մեյտան հանել»¹⁴ կամ ժողովրդին կապել սեփական հարուստ ու հերոսական պատմության հետ: Հատկապես այս վերջին հանգամանքը շատ կարևոր էր, որովհետև հայ ժողովրդի գիտակցության մեջ ձևավորվում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Մեծ մասամբ սրանով էր պայմանավորված նաև աշխարհաբարի կանոնավորման արագ ընթացքը՝ XIX դ. 40-ական թթ. սկսած: Մասնավորապես, բառագործածության ոլորտում ծավալված պայքարը թուրքական բառային փոխառությունների դուրսմղման նպատակով լայն թափ էր ստանում: Դրա լավագույն արտահայտություններից մեկը Աբրահամ Ճարյանի լեզուն է: Մխիթարյան այս գործիչը աշխարհաբարով հրատարակել է մի դասագիրք, որը գրված է բավական մաքուր արևմտահայերենով: Ա. Ճարյանի բառապաշարն աչքի է ընկնում մաքրությամբ, իսպառ բացակայում են թուրքական փոխառությունները: Նա, ի տարբերություն մյուսների, գերազանցապես հենվելով գրաբարին, աշխատում է խուսափել ուղղագրական տարբերակներից: Քերականական համակարգը գերազանցապես աշխարհաբարյան է: Այսպիսով, կարելի է ասել, որ Ա. Ճարյանի լեզուն այդ շրջանի լեզվական մշակույթի լավագույն դրսևորումներից է:

Ի մի բերելով ասվածը՝ կարելի է եզրակացնել.

1. Առանձնակի վերաբերմունք դրսևորելով գրաբարի նկատմամբ՝ Մխիթարյանները եղան աշխարհաբարի առաջին լուրջ պաշտպաններն ու մշակողները:

2. Աշխարհաբարի զարգացման ասպարեզում Մխիթարյաններն ընթացել են գրաբարաբանությունների, օտարաբանությունների աստիճանական հաղթահարման, մաքրման, քերականական համակարգի կանոնարկման ճանապարհով: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ այդ ընթացքը կարելի է բաժանել երեք շրջանի.

¹² Փափագեան Բ., Հանգանակ հավատոյ, Վենետիկ, 1817, էջ 16:

¹³ Բժշկեան Մ., Հմտութիւն մանկանց, Վենետիկ, 1818, էջ 31:

¹⁴ Աւգերեան Մ., նշվ. աշխ., էջ 311:

1-ին - XVIII դ. սկզբից մինչև XVIII դ. 90-ական թթ.:

2-րդ - XVIII դ. 90-ական թթ. մինչև XIX դ. 20-ական թթ.:

3-րդ - XIX դ. 20-ական թթ. մինչև 40-ական թթ.:

Այս շրջանաբաժանման համար հիմք են ծառայել Մխիթարյանների աշխարհաբար գրքերի լեզվական առանձնահատկությունները, որոնք կարևոր դեր ունեն ընդհանրապես արևմտահայերենի պատմության ուսումնասիրության տեսակետից:

РОЛЬ МХИТАРИСТОВ В РАЗВИТИИ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКА (XVIII В. - ПЕРВАЯ ПОЛОВИНА XIX В.)

АСОЯН Т. А.

Резюме

В начале XVIII в. сформировались и развились две ветви армянского языка – восточноармянский и западноармянский. В начальный период наблюдалось развитие западноармянского языка. Важную роль в этом процессе сыграли представители венецианской конгрегации мхитаристов. Изучение работ мхитаристов по западноармянскому языку явствует, что если до 90-ых годов XVIII в. и в первой четверти XIX в. на западноармянский язык оказывали существенное влияние древнеармянский язык (грабар), турецкий и ряд диалектов, то начиная с 20-ых годов XIX в. усилиями мхитаристов западноармянский язык претерпел значительные изменения как в плане грамматики, так и лексики.

THE ROLE OF MKHITARISTS IN THE DEVELOPMENT OF WESTERN ARMENIAN LANGUAGE (XVIII CENTURY – BEGINNING OF XIX CENTURY)

T. ASOYAN

Abstract

The division of ashkharabar led to the formation and development of the eastern and western Armenian languages.

Western Armenian developed quickly in the first stage, the representatives of Mkhitarist congregation played an important role in this process. They showed considerate attitude towards Western Armenian, purifying and enriching the vocabulary and setting the grammatical structure. If Eastern Armenian was under the influence of grabar till 1790s and in the first quarter of the 19th century was under the influence of dialects and the Turkish language, then in the 20th century the language of Mkhitarists became pure and stable.